



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. հոկտեմբերին /վերլուծություն/

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14550 գործարքներ, որոնց քանակը 2007թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 9.1%-ով, իսկ 2008թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 10.0%-ով:

2008թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5035 օտարման գործարքների 82.3%-ը կազմել են առուվաճառքները, 16.5%-ը՝ նվիրատվությունները և 1.2%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի

30.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 31.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2008թ. հոկտեմբերին, 2008թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 6.2%-ով, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 16.7%-ով:

2008թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 67.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2008թ. սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.1%-ով, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 25.5%-ով:

2008թ. հոկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2007թ.	հոկտեմբեր 2008թ.	սեպտեմբեր 2008թ.
Կենտրոն	465500	490000	486500
Արաբկիր	377300	401700	403600
Քանաքեռ-Զեյթուն	282900	313200	311400
Նոր-Նորք	245000	272600	273000
Ավան	243700	276800	272600
Էրեբունի	243900	267000	275200
Շենգավիթ	259500	283700	285500
Դավթաշեն	274400	304900	307300
Աջափնյակ	256000	269800	276000
Մալաթիա-Սեբաստիա	246400	255000	259400
Նուբարաշեն	133200	165600	160000
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	275300	300000	301000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. հոկտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. սեպտեմբերի համեմատ նվազել են 0.3 %-ով:

2008թ. հոկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 426 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. սեպտեմբերի համեմատ աճել է 9.8%-ով, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 20.7%-ով:

2008թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2007թ.	հոկտեմբեր 2008թ.	սեպտեմբեր 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	111000	140300	140100
	Ապարան	30300	36400	35700
	Թալին	40200	47100	45800

Արարատ	Արտաշատ	89800	107800	107600
	Մասիս	107500	138000	132700
	Վեդի	68300	83300	83200
	Արարատ	57800	69500	67000
Արմավիր	Վաղարշապատ	139100	178600	171600
	Արմավիր	104700	128900	128700
	Մեծամոր	66100	89300	86000
Գեղարքունիք	Սևան	70500	102500	102300
	Գավառ	37900	51800	50000
	Մարտունի	56900	71200	69000
	Վարդենիս	27500	33000	32900
	Ճամբարակ	15400	16500	16500
Լոռի	Վանաձոր	77400	102400	102000
	Ստեփանավան	41200	48800	48700
	Մայիսակ	52500	62800	62700
	Ալավերդի	27500	32700	32600
	Տաշիր	27900	33500	32900
	Թումանյան	5500	5600	5600
	Շամլուղ	3200	3200	3200
	Ախթալա	12200	13000	13000
Կոտայք	Աբովյան	151100	177400	177100
	Նոր Հաճն	111600	138100	132400
	Բյուրեղավան	80200	117700	113000
	Եղվարդ	101600	127400	127200
	Հրազդան	55900	75300	72000
	Ծաղկաձոր	105600	165000	164500
	Զարենցավան	69200	98200	95200
Շիրակ	Գյումրի	79400	118200	113600
	Արթիկ	48500	59400	57300
	Մարալիկ	25700	29000	28100
Սյունիք	Գորիս	78800	114600	114200
	Կապան	70800	103500	99000
	Սիսիան	57700	84600	81600
	Մեղրի	40900	49200	49200
	Ագարակ	26700	30300	29500
	Քաջարան	38900	53500	53500
	Դաստակերտ	7000	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	66300	83800	80500
	Եղեգնաձոր	84100	106400	101800
	Զերմուկ	114800	140600	135800
Տավուշ	Դիլիջան	75400	106000	105900
	Իջևան	98300	141500	136500
	Բերդ	35200	40600	40600
	Նոյեմբերյան	28900	31200	31200
	Այրում	21000	21100	21100

2008թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. սեպտեմբերի համեմատ աճել են 2.1%-ով:

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 495 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 88, մյուս մարզերում միասին վերցրած՝ 407: 2008թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է՝ 8.1%-ով, ընդ որում

Երևանում նվազել՝ 19.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 16.6%-ով: 2007թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 30.5%-ով, ընդ որում Երևանում՝ 56.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 19.9%-ով:

2008թ. հոկտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2007թ.	հոկտեմբեր 2008թ.	սեպտեմբեր 2008թ.
Կենտրոն	472700	508500	506700
Արաբկիր	390800	438200	437400
Քանաքեռ Զեյթուն	287700	324700	322900
Նորք Մարաշ	245400	310400	304400
Ավան	246200	289800	288000
Էրեբունի	249600	290000	288700
Շենգավիթ	261800	292800	292000
Դավթաշեն	277600	324500	322700
Աջափնյակ	259300	300900	299400
Մալաթիա-Սեբաստիա	249000	294200	291200
Նուբարաշեն	133900	168300	163900
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	279500	322000	319800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. հոկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. սեպտեմբերի համեմատ աճել են 0.7%-ով:

2008թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2007թ.	հոկտեմբեր 2008թ.	սեպտեմբեր 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	116100	144800	144400
	Ապարան	33500	38800	38600
	Թալին	42800	48500	48400
Արարատ	Արտաշատ	95000	112100	110900
	Մասիս	110500	139200	139100
	Վեդի	69500	91600	91500
	Արարատ	63000	70700	68200
Արմավիր	Վաղարշապատ	140600	179700	176700
	Արմավիր	106000	132500	131900

Գեղարքունիք	Սևան	71500	106000	104800
	Գավառ	40100	54400	52900
	Մարտունի	58000	77200	77000
	Վարդենիս	30700	36900	36600
	Ճամբարակ	18700	21100	21000
Լոռի	Վանաձոր	83900	109400	107900
	Ստեփանավան	44900	53500	53300
	Սպիտակ	53800	67500	67300
	Ալավերդի	30000	37200	36900
	Տաշիր	29400	37700	37300
	Թումանյան	8700	10400	10300
	Շամլուղ	5700	7400	7300
	Ախթալա	15100	16200	16200
Կոտայք	Արսիկ	157600	191600	191000
	Նոր Հաճն	115300	142300	141200
	Բյուրեղավան	81400	119700	117900
	Եղվարդ	103900	133500	132800
	Հրազդան	59700	79500	78500
	Ծաղկաձոր	162400	267300	260800
	Չարենցավան	71400	100200	99700
Շիրակ	Գյումրի	84200	120300	116000
	Արթիկ	50800	63300	61900
	Մարալիկ	28900	32700	32500
Սյունիք	Գորիս	81800	125400	123400
	Կապան	76000	105800	101800
	Սիսիան	59700	85900	83400
	Մեղրի	43700	51400	50600
	Ագարակ	28300	33300	33100
	Դաստակերտ	9800	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	67900	85700	82700
	Եղեգնաձոր	86200	108900	104700
	Զերմուկ	62400	98400	95800
Տավուշ	Դիլիջան	79100	119200	115000
	Իջևան	100900	143200	138100
	Բերդ	38700	42300	41800
	Նոյեմբերյան	34500	36400	36100
	Այրում	22800	23000	23000

2008թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. սեպտեմբերի համեմատ աճել են 1.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարվել են 2171 միավոր /1322.10 հա/ հողեր, որից Երևանում՝ 88 միավոր /7.76 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 38 միավոր /13.50 հա/ հողեր, որից Երևանում՝ 19 միավոր /2.33 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 901 միավոր /1147.77 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.55 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 816 միավոր /68.35 հա/, որից Երևանում՝ 61 միավոր /3.95 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 420 միավոր /81.27 հա/, որից Երևանում՝ 19 միավոր /3.12 հա/,

- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 12 միավոր /12.04 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.14 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 15 միավոր /12.41 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 7 միավոր /0.26 հա/

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 2042 միավորի /1281.91 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 78 միավոր /7.04 հա/, նվիրատվության գործարքներ՝ 113 միավորի /35.99 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.33 հա/ և փոխանակության գործարքներ՝ 16 միավորի /4.20 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.39 հա/:

Հանրապետությունում 2008թ. հոկտեմբերին, 2007թ. հոկտեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 13.3%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել՝ 17.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 63.6%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 372.36 հա, որից 353.29 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 40.0%-ը կամ 816 գործարքներ /487.49 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 14 գործարքներ /1.69 հա/, իսկ 59.6%-ը կամ 1217 միավորը /792.49 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 64 միավոր /5.35 հա/:

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 9 գործարք /1.92 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2008թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՄՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	3	0.14	1	0.02	10	1.53	4	0.47	0	0.00	53	3.35	7	1.53
Արագածոտն	36	73.79	1	0.01	21	2.23	48	1.73	73	158.97	0	0.00	48	5.69	3	60.00
Արարատ	9	8.84	1	0.05	28	2.35	9	0.30	119	38.02	0	0.00	87	8.73	9	0.45
Արմավիր	20	94.73	1	0.01	2	0.10	24	0.57	130	253.83	2	2.27	104	9.23	13	0.33
Գեղարքունիք	1	1.50	1	0.04	121	6.55	47	2.16	63	29.67	0	0.00	11	1.32	0	0.00
Լոռի	4	6.20	0	0.00	12	0.64	57	1.83	48	22.39	0	0.00	12	1.45	2	0.02
Կոտայք	92	241.02	0	0.00	10	0.89	39	1.91	169	112.27	0	0.00	132	14.00	16	1.69
Շիրակ	7	7.75	0	0.00	44	1.68	26	1.57	13	21.67	0	0.00	10	0.88	6	0.09

Սյունիք	2	7.60	0	0.00	1	0.06	11	0.78	21	10.52	0	0.00	4	0.32	2	0.01
Վայոց Ձոր	3	1.86	1	9.50	6	0.46	44	0.64	9	1.76	0	0.00	3	0.35	5	0.25
Տավուշ	5	1.63	2	0.03	28	1.46	29	2.59	18	19.16	0	0.00	11	0.80	1	1.00
Ընդամենը	179	444.92	10	9.78	274	16.44	344	15.61	667	668.73	2	2.27	475	46.12	64	65.37

Ստորև ներկայացվում է 2008թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	14	1.69	3	0.14	1	0.02	10	1.53	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	101	73.55	32	69.59	1	0.01	21	2.23	47	1.72		
Արարատ	1	0.09	0	0.00	1	0.09	0	0.00	46	11.45	9	8.84	1	0.05	27	2.26	9	0.30		
Արմավիր	10	0.25	1	0.01	0	0.00	9	0.24	36	93.36	19	92.93	0	0.00	2	0.10	15	0.33		
Գեղարքունիք	2	0.05	1	0.04	0	0.00	1	0.01	168	10.20	1	1.50	0	0.00	121	6.55	46	2.15		
Լոռի	5	0.07	0	0.00	2	0.03	3	0.04	68	8.60	4	6.20	0	0.00	10	0.60	54	1.80		
Կոտայք	17	0.37	0	0.00	0	0.00	17	0.37	122	242.99	90	240.56	0	0.00	10	0.89	22	1.54		
Շիրակ	10	0.36	0	0.00	4	0.12	6	0.24	67	10.64	7	7.75	0	0.00	40	1.56	20	1.33		
Սյունիք	2	0.002	0	0.00	0	0.00	2	0.002	12	8.44	2	7.60	0	0.00	1	0.06	9	0.78		
Վայոց Ձոր	3	9.51	1	9.50	0	0.00	2	0.01	51	2.95	3	1.86	0	0.00	6	0.46	42	0.63		
Տավուշ	6	0.14	0	0.00	4	0.06	2	0.08	58	5.57	5	1.63	2	0.03	24	1.40	27	2.51		
Ընդամենը	71	12.54	6	9.69	12	0.32	53	2.53	729	467.75	172	438.46	4	0.09	262	16.11	291	13.09		

Հանրապետությունում 2008թ. հոկտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 7 գործարք /6.46 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. հոկտեմբերին 2007թ. հոկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 11.8%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 64 գործարքով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 4.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 32.8%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 8.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել՝ 4.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 77.8%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. հոկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների			
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	21	58.89	34.8	624.8	217.6	48	52.78	365.0	12000.0	3740.0
Ապարան	1	0.93	209.4	209.4	209.4	4	0.82	86.5	2727.3	472.0
Թալին	10	9.77	35.5	124.0	54.4	17	91.24	93.6	5494.5	492.2
Ծաղկահովիտ						4	14.12	79.5	1000.0	208.4
Արարատի մարզ										
Արտաշատ	3	4.75	521.3	546.9	538.1	56	19.42	335.1	10833.3	1925.8
Մասիս	2	1.42	76.5	87.3	81.9	17	4.47	200.0	11904.8	2503.5
Վեդի	4	2.67	184.6	295.1	267.0	46	14.14	207.0	10795.1	1695.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	5.76	31.5	1134.0	252.0	62	52.01	294.3	9090.0	1135.4
Բաղրամյան	9	74.95	21.3	106.3	41.8	13	173.22	90.6	2561.1	660.9
Վաղարշապատ	5	12.22	39.1	182.5	69.9	54	27.30	444.4	11764.7	2220.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						55	21.55	199.8	1875.0	432.5
Ճամբարակ	1	1.50	528.7	528.7	528.7	1	1.01	60.5	953.3	196.5
Մարտունի						1	0.23	51.1	2850.0	525.8
Սևան								52.2	2134.8	212.5
Վարդենիս						6	6.88	41.2	2575.1	322.0
Լոռու մարզ										
Այվերդի						21	8.10	170.4	6424.2	1144.0
Գուգարք	2	1.61	360.0	366.0	363.0	7	2.95	234.6	6065.9	1016.7
Սպիտակ						5	1.85	250.0	5555.5	568.5
Ստեփանավան	2	4.59	669.6	670.8	670.2	10	6.93	90.6	1686.6	410.0
Տաշիր						5	2.55	45.3	1384.4	218.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	23	45.43	38.4	650.0	248.3	80	61.80	279.3	11942.7	4452.8
Եղվարդ	39	78.67	83.4	1215.5	306.5	77	43.14	174.4	11971.8	3115.2
Հրազդան	28	116.46	33.3	2010.0	410.0	12	7.33	130.5	10256.4	1272.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	4.00	147.4	147.4	147.4	5	6.53	252.0	1693.1	485.5
Ամասիա	1	2.45	106.1	106.1	106.1	2	6.16	40.9	261.0	127.8
Անի	2	1.30	147.1	147.1	147.1	4	4.78	110.6	546.9	282.8
Աշոցք						1	1.98	58.5	215.8	120.3
Արթիկ						1	2.22	79.4	1428.6	193.5
Սյունիքի մարզ										
Գորիս						15	4.54	92.6	1023.2	414.5
Կապան	2	7.60	325.2	340.7	333.0	3	1.49	120.0	841.6	258.8
Մեղրի								193.0	3000.0	554.8
Սիսիան						3	4.49	46.3	1977.4	278.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	1.86	157.1	386.7	309.4	7	1.35	125.0	10000.0	1400.6
Վայք						2	0.40	58.8	1430.7	526.2
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.27	213.3	3783.8	420.5
Իջևան	5	1.63	450.0	9200.0	2694.6	4	10.96	267.5	9454.5	928.5
Նոյեմբերյան						13	7.93	46.7	7368.4	656.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. հոկտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	2974.0	173.1	40007.4	1956.7	40	45828.5	130.7	22200.0	2574.0
Ապարան	4	3829.0	189.0	268.7	228.6	6	9840.0	124.1	609.6	225.0
Թալին	12	15502.0	75.6	302.0	99.8	2	1220.0	63.2	1454.8	115.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	75.1
Արարատի մարզ										
Արտաշատ						18	20768.0	173.9	7140.3	927.0
Մալիս	26	21100.0	545.0	1048.1	748.9	48	41143.0	187.5	25000.0	1218.0
Վեդի	1	1508.0	232.1	232.1	232.1	21	25420.0	126.1	5000.0	680.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						31	27623.0	131.6	9090.9	1220.0
Բաղրամյան						3	4600.0	100.0	833.3	158.5
Վաղարշապատ	2	1000.0	3828.0	4002.0	3915.0	67	57606.0	197.4	26528.4	1555.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	3031.0	186.6	1084.3	402.2
Ճամբարակ						5	5290.0	71.3	2286.2	109.5
Մարտունի	86	36665.0	108.3	122.3	117.7			119.3	5000.0	272.5
Սևան	35	28863.0	188.1	690.6	464.3			240.0	3110.4	185.5
Վարդենիս						2	4847.0	72.5	987.2	135.8
Լոռու մարզ										
Ալավերդի						2	2470.0	114.3	1388.9	152.2
Գուգարք	6	3616.0	2009.7	4750.2	2965.2	1	452.0	77.9	14083.3	628.7
Սյիտակ						3	3020.0	104.9	1348.3	153.4
Ստեփանավան	4	2412.0	264.0	277.2	270.6	3	5980.0	88.2	1666.7	121.7
Տաշիր						2	1620.0	45.3	400.0	72.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	4052.0	275.5	2890.8	1392.4	57	61679.0	264.5	35353.5	2089.6
Եղվարդ	1	800.0	3381.0	3381.0	3381.0	64	64712.0	173.6	27000.0	2345.1
Հրազդան	4	4000.0	393.0	403.0	398.0	11	13651.0	117.7	34848.5	1354.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	30	8335.0	290.4	3750.0	2167.1	6	5250.0	113.6	18750.0	335.1
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	3	3600.0	45.8	116.6	69.4	1	1490.0	67.9	180.6	102.0
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	7	3690.0	265.5	427.9	296.8	3	2050.0	111.8	5000.0	200.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1296.0	112.2	1700.0	264.7
Կապան	1	600.0	422.3	422.3	422.3			67.9	2638.9	218.8
Մեղրի								68.5	632.9	134.1
Միսիան						2	1950.0	123.5	875.0	154.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	6	4579.0	116.6	762.5	439.6	2	2360.0	96.7	7659.6	338.5

Վայք								120.7	1448.3	129.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	200.0	75.8	810.0	91.5
Իջևան	21	12745.0	297.0	2750.0	1661.9	9	6775.0	74.1	14423.1	478.2
Նոյեմբերյան	3	1277.0	79.8	468.8	339.1	1	990.0	125.0	1948.1	150.2

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 3 գործարքներ 0.29 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ /0.10 հա/ Արարատի և 2-ը՝ /0.19 հա/ Լոռու մարզերում:

2008թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1150 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 49.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. հոկտեմբերին 2008թ. սեպտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 33.9%-ով, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ՝ 1.2%-ով:

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 72 բնակարանների, 36 անհատական բնակելի տների, 447 հասարակական, 42 արտադրական նշանակության օբյեկտների, 541 միավոր /14277.41 հա/ հողերի և 12 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. հոկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 18 վարձակալության գործարքների /այդ թվում 6 միավոր /0.01 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2008թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 5.3%-ով, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ՝ 66.7%-ով:

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում վարձակալված 14277.41 հա հողերից 1.22 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 14276.20 հա հողերի 77.00 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 12272.65 հա, որից 12258.73 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 6876.83 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. հոկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	3	738.09	15	77.07
Արարատ	0	0.00	10	8.74
Արմավիր	0	0.00	27	139.93
Գեղարքունիք	1	70.00	50	465.49
Լոռի	0	0.00	3	6.20
Կոտայք	0	0.00	10	72.04
Շիրակ	0	0.00	44	209.83

Սյունիք	7	5944.34	41	6314.39
Վայոց Ձոր	1	124.40	9	6.78
Տավուշ	0	0.00	0	0.00
Ընդամենը	12	6876.83	209	7300.47

2008թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2262 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15.5%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. սեպտեմբերի համեմատ աճել է 5.8%-ով, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 15.6%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.6%/, առանձնատների /25.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.0%/ և հողերի /14.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 864 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 2.2%-ով, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ՝ 15.7%-ով:

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 573.85 հա հողեր, որից 7.95 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 86.8%-ը կամ 498.11 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.53 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 228.94 հա, որից 227.94 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 137 գործարքներ, որից 92-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 75.9%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 12.4%-ն՝ անհատական բնակելի տների, 3.6%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.7%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 2.2%-ն՝ ամառանոցների, 0.7% ավտոտնակների և 4.4%-ը՝ հողերի նկատմամբ: 2008թ. սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 5.5 %-ով, ընդ որում Երևանում՝ 16.4%-ով, իսկ մարզերում աճել՝ 28.6%-ով:

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 5 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: Մասնավորեցման գործարքների քանակը 2008թ. սեպտեմբերի և 2007թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 16.7%-ով: 2008թ. հոկտեմբերին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 2-ը՝ Արագածոտնի, 1-ական՝ Կոտայքի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում:

2008թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2736 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. սեպտեմբերի համեմատ աճել է 14.0%-ով, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 18.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.8%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն